


Յունաստանի արտաքին գործոց նախարար Ջորձ Փափանտրեու երկ և Անգարա ժամանեց, թուրք պաշտօնատարներու հետ խորհրդակցութիւններ ունենալու համար Աթէնք - Անգարա յարաբերութիւններուն մասին: Փափանտրեու նկատել տուաւ, որ Յունաստան եւ Թուրքիա պէտք է յաղթահարեն անցեալի վախերը, շրջանցելու համար իրենց միջեւ բնական յարաբերութիւններու կայացումը խոչընդոտող արգելքները: Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Իսմայիլ ձէմիր ին տեսակցելէ ետք, Փափանտրեու նշեց, որ տակաւին գլխաւոր հարցերը լուծուած չեն:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԶՐՕՍԱՇՐՋՈՒԹԻՒՆԸ ԱՊԱԳԱՅԻ ԵՄՔԱՐԱՐՈՒԹԵԱՆ Ե

Կ'ԸՍԵ ՆԱԽԱԳԱՆ ԼԱՆՈՒՏ

Նախագահ զօր. Էմիլ Լահուտ երէկ ընդունեց զբօսաշրջութեան նախարար Քարամ Քարամը, որուն կ'ընկերակցէին Սուրիոյ եւ Յորդանանի զբօսաշրջութեան նախարարներ Քասէմ Մըքտատ եւ Աբըլ Պալմաթի, ինչպէս նաեւ զբօսաշրջութեան միջազգային կազմակերպութեան ընդհանուր քարտուղար Ֆրանչէսքօ Ֆրանժիէլի եւ լիբանանեան զբօսաշրջութեան գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար Նասրի Խուրի:



Նախագահ Լահուտ կ'ընդունի Սուրիոյ եւ Յորդանանի զբօսաշրջութեան նախարարները:

Հանդիպումին նախագահ Լահուտ ընդգրծեց անհրաժեշտութիւնը առաւելագոյն հետաքրքրութիւն եւ հոգածութիւն ընձայելու զբօսաշրջութեան մարզին, որովհետեւ անիկա «ապագայի ճարտարաբանութիւնն է», եւ անմիջապէս կապ ունի մարդոց եւ մշակութային ու քաղաքակրթական արժէքներուն հետ:

Գրօսաշրջային մարզէն ներս մրցակցութիւնը նպատակ չի կրնար ըլլալ մանաւանդ արարական երկիրներուն միջեւ, այլ նպատակը պէտք է ըլլայ զիրար ամբողջացնել, որովհետեւ իւրաքանչիւր պետութիւն ունի զբօսաշրջային իր իւրայատուկութիւնը, եւ Լիբանան Սուրիա եւ Յորդանան տարբեր տեսակի զբօսաշրջային ծառայութիւններ կը մատուցեն, հետեւաբար կրնան զիրար ամբողջացնել:

Նախագահը նաեւ վերադառնալով իր անձնական կարեւորութիւնը՝ քայլ

պահելու զբօսաշրջութեան ընդհանուր ներդրումը տնտեսութեան եւ զարգացումներուն հետ:


Հանդիպումին քննարկուեցան զբօսաշրջութեան Միջազգային կազմակերպութեան ճիւղերը համակարգում մը ստեղծելու անհրաժեշտութիւններուն ու յատկապէս արարական երկիրներուն միջեւ, ինչպէս նաեւ Լիբանանի, Սուրիոյ եւ Յորդանանի զբօսաշրջութեան նախարարութիւններու գործակցութիւնը:

Շարք՝ էջ 2

ՔԻ ՈՒԵՍԹԻ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ ԳԱՂՏՆԱՊԱՇՈՒԹԵԱՆ ՄԹՆՈՒՈՐՏԻ ՄԷՋ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը Նախաձեռնութեամբ Հայաստանի եւ Արարատի նախագահներ՝ Ռոպէրթ Քոչարեանի եւ Հայտար Ալիեւի, Քի Ռոչեսթըրի մէջ սկսան բանակցութիւններու, Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծումը մը գտնելու առաջարկներով: Բանակցութիւններուն նաեւ կը մասնակցին ԵԱՀԿ Մինսքի խմբակի անդամներ Ֆրանսուա Կարիքի եւ ռուս համանախագահները:

Նախքան դռնփակ բանակցութիւնները, նախագահներ Քոչարեանի եւ Ալիեւի ներկայացուցին իրենց տեսակէտները: Նախագահ Ալիեւ երկարաշունչ խօսքի մը մէջ մեղադրեց Հայաստանը նախադրական ըլլալու յանցանքով: Ան կոչ ուղղեց Միացեալ Նահանգներու, Ֆրանսայի եւ Ռուսիոյ՝ աշխուժացնելու տագնապին լուծման ջանքերը: «Կարիք չկայ, նշելու, որ տագնապին լուծումը դրական մեծ պոթենցիալ կ'ունենայ հարաւային Կովկասի ապահովութեան եւ կայունութեան վրայ», ըսաւ ան, եւ երկարօրէն



Ալեք ճախ՝ Ռ. Քոչարեան, Ք. Փաուլը եւ Հ. Ալիեւ:

անդրադարձաւ Լեռնային Ղարաբաղի տագնապին պատմութեան:

Նախագահ Քոչարեանի խօսքը եղաւ կարճ եւ բովանդակալից: «Ես երկար ճանապարհ կտրած եմ ոչ թէ քարոզչութիւն ընելու, այլ կառուցողական աշխատանքի նպատակով», նշեց ան:

Այնուհետեւ կայացաւ դռնփակ հանդիպում մը Քոչարեանի, Ալիեւի, Փաուլըի եւ Մինսքի երեք համանախագահներուն միջեւ:

Հանդիպումին աւարտին Մինսքի խմբակի անդամները համանախագահը՝ Քերի Քաւանօ, տուաւ մամլոյ ասուլիս մը, որուն ընթացքին ըսաւ, որ բանակցութիւններուն ընթացքը լաւ է:

Քաւանօ նշեց, որ բանակցութիւններուն, եթէ կարիքը պագուի, կրնան հրաւիրուիլ «Լեռնային Ղարաբաղի տեղական իշխանութիւններուն ներկայացուցիչները»: Ան ըսաւ, որ եթէ նման բանի անհրաժեշտութիւնը պագուի, ԵԱՀԿ Մինսքի խմբակի համանախագահները պիտի քննարկեն պահանջը եւ պիտի գտնեն պանոնք հրաւիրելու միջոցը:

Շարք՝ էջ 10

ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎ

Նախարարաց խորհուրդը երէկ յետմիջօրէին գումարեց իր հերթական ժողովը, գլխաւորութեամբ նախագահ զօր. Էմիլ Լահուտի եւ ներկայութեամբ վարչապետ Ռաֆիք Հաւրիբի եւ նախարարներուն: Ժողովէն կը բացակայէին նախարարներ Սամիր Ժըւարը եւ Պըշարա Մըրիթ:

Ժողովի արտաքին տեղեկատուութեան նախարար Ղապի Արիտի յայտարարեց ժողովին որոշումները: Ան ըսաւ, որ սուրիական ներկայութեան մասին առկայ բանավէճը իշխան Լիբանանի չէ, եւ թէ անհրաժեշտ է առողջ երկխօսութիւնը:

Նախքան կառավարութեան ժողովը, Լահուտ եւ Հարիբի ունեցան գլուխ գլխի հանդիպում մը:

ԹՈՒՐԻՔԻՈՅ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐԸ ՊԻՏԻ ԱՐԺԵՆ 14,5 ՄԻԼԻԱՌ ՏՈՒՆԱՐ

Այն բարեկարգումները, որոնց Թուրքիա պէտք է զիմէ Ե. Միութեան անդամակցութեան համար բանակցութիւններուն սկսելու նպատակով 16 միլիառ եւրօ (14,5 միլիառ տոլար) պիտի արժեն, ըստ բարձրաստիճան պաշտօնատարի մը, որ պատասխանատու է երկիրը Ե. Միութեան անդամակցութեան պատրաստելու հարցերուն:

Թուրքիոյ Ե. Միութեան հարցերու ընդհանուր քարտուղար՝ Վոլքան Վուրալ յայտնած է, թէ Փետրուարին ծայր տուած ելեւմտական տագնապի մը պատճառած ելեւմտական դժուարութիւնները Ե. Միութեան անդամակցութեան գործընթացը իր ընթացքէն դուրս պէտք է ընթանայ, նկատի ունենալով, որ բարեկարգումներուն ծախսերը քանի մը տարիներու վրայ կարելի է երկարել:

Ան ըսած է, թէ ծախսերուն մէկ մասը կրնայ նաեւ անդամակցութեան բանակցութեանց սկսուածէն ետք հատուցուիլ:

Ե. Միութիւնը, Մ. Նահանգներն ու փոխատուութիւն կատարող հաւանական կազմակերպութիւններ կ'ուզեն տնտեսական բարեկարգումներու ուժեղ ծրագրի մը տեսնել՝ ելեւմտական նոր զօրակցութեան գծով յանձնառութեան տակ մտնելէ առաջ:

Վուրալ յայտնած է, թէ բարեկարգչական քայլերը, որոնց կ'ուզէ ձեռնարկել կառավարութիւնը՝ արտաքին օժանդակութիւն ապահովելու համար, պիտի նպաստեն նաեւ Թուրքիոյ Ե. Միութեան տնտեսական շափանչանքներուն հասնելու:

(ՌՈՅԹԸՐԶ)

ՎԱԿԱՆԱԿ ԱՐԻՒՆԱՇՆՈՒԹԻՒՆ ԿԱՍԵՅՆԵՆՈՒ ՎԱՍՐ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

ՊԱՂԵՍՏԻՆԵՒԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆՈՒՄՆԵՐԸ ՆՈՅՆ ԹԱՓՈՎ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ

Պաղեստինցիներուն ու իսրայէլեան ուժերուն միջեւ բախումները շարունակուեցան երէկ հակառակ անոր որ մինչեւ առաւօտեան կանուխ ժամերը պահուողութեան մարտի պատասխանատուները բանակցութիւններ կը կատարէին վերջ տալու համար արիւնահեղութեան, որ օրըստօրէ թափ կը ստանայ:

Կապալի մէջ իսրայէլացի պինտուրներ սպաննեցին պաղեստինցի պատանի մը, որ կը մասնակցէր մանուկներու սպանութեան դէմ կազմակերպուած բողոքի ցոյցի մը: Սեպտիմբերեան վայրի մօտ տեղի ունեցած այս բախումին վիրաւորուեցան նաեւ երեք պատանիներ: Իսկ Այլըր-յորդանանի Ժեւիլի քաղաքին մէջ սպանուեցաւ Իսլամական փիլիսոփայի անդամ մը:

Յիշեալ միջադէպէն քանի մը ժամ առաջ, իսրայէլեան ուժեր Կապալի մէջ կրակ բացին բանակցութիւններէն վերադարձող պաղեստինցի պաշտօնատարներուն ինքնաշարժներուն վրայ: Վիրաւորուեցան երկու թիկնապահներ: Միջադէպը սուր բանավէճի մը դուրս բացաւ երկու կողմերուն միջեւ: Իսրայէլեան բանակը յայտարարեց, որ պինտուրները կրակ բացած են հակադարձելով պաղեստինեան ճիւղերէն մէկէն արձակուած փամփուշտներուն: Սակայն պաղեստինցիները հերքեցին այս վարկածը, պնդելով, որ իսրայէլացի պինտուրները դիտարկուեցան կերպով թիրախ դարձուցած են պաղեստինեան ինքնաշարժները: Ըրէպի անցարգելի մօտ տեղի ունեցած միջադէպը յաւելեալ կերպով սրեց լարուածութիւնը երկու կողմերուն միջեւ:

Պաղեստինեան հանրային ապահովութեան գլխաւոր պատասխանատու զօր. Ապտէլ Ռապէք Մա-



Փերես աշիմ Աթէնքի մէջ տեսակցեցաւ Շաաթի հետ:

ժայտէ եւ ապահովութեան այլ պատասխանատուներ Մոհամէտ Տահլան եւ Ամին Հինտի կը գտնուէին ինքնաշարժներուն մէջ: Հինտի ըսաւ, որ Իսրայէլ ծրագրած էր անհրաժեշտ պաղեստինեան շրջաններուն ապահովութեան պատասխանատուները: Իսկ պաղեստինեան կառավարութեան անդամ Հասան Ասֆուր յայտարարեց, որ պաղեստինեան իշխանութիւնը կը սպասէ, որ Իսրայէլ իրապարակաւ ներողութիւն խնդրէ, այլապէս՝ բանակցութիւններ տեղի պիտի չունենան իսրայէլացիներուն հետ:

Ապահովութեան պատասխանատուները ամբողջ գիշերը բանակցած էին եւ համաձայնած, որ պէտք է մեղմացնել վայրագութիւնն ու արիւնահեղութիւնը: Բանակցութիւնները կը վայելէին Միացեալ Նահանգներու հովանաւորութիւնը:

Յիշեալ հանդիպումէն կարճ ատեն մը առաջ, Իսրայէլի արտաքին գործոց նախարար Ծիմնա Փերէս Աթէնքի մէջ հանդիպում մը ունեցած էր պաղեստինցի գլխաւոր բանագնաց Սաէպ Ուրաբաթի հետ, քննարկելու համար խաղաղութեան բանակցութիւններուն վերսկսելու կարելիութիւնները: Ալիեւի ու Փերէս ճառ մը արտասանեց տնտեսական միջապագային

Շարք՝ էջ 10

ԹՈՒՐԻՔԻԱ ԼՈՊԻՒՆԿ ԿԸ ԿԱՏԱՐԵ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐՈՒ ՄԷՋ

Թուրքիոյ խորհրդարանի արտաքին յարաբերութիւններու յանձնախումբի նախագահ Քարամ Ինանի գլխաւորած պատուիրակութիւնը Ուաշինգթոնի մէջ հանդիպումներ ունեցաւ արտաքին գործոց նախարարի քաղաքական հարցերով տեղակալ Մարք Կրոսմանի, հանրապետական քոնկրէսական Չաք Հակըրի եւ պաշտպանութեան նախկին նախարար Ռիչըրտ Փըրլի հետ:

Թուրքիոյ խորհրդարանական քաղաքական ուժերու ներկայացուցիչներէն կազմուած պատուիրակութիւնը հանդիպում ունեցաւ նաեւ Պոպ Լիվինկաթընի եւ Ճեփրըտ Սոյոմոնի հետ, որոնք Մ. Նահանգներու մէջ Թուրքիոյ ինքնապաշտպանութեան կատարող ընկերութեան տնօրէններն են: Թուրք երեսփոխանները հանդիպում ունեցան նաեւ Մ. Նահանգներու թրքական համայնքի ներկայացուցիչներուն հետ: Հանդիպումներուն քննարկուեցան Թուրքիոյ տնտեսական բարգաւաճումին, Թուրքիոյ տրամադրուելիք դիւրութիւններուն եւ Հայկական Յեղափոխութեան մասին բանաձեւերուն առնչուող հարցեր:

Պատուիրակութիւնը հանդիպում պիտի ունենար նաեւ պաշտպանութեան փոխ նախարար Փոլ Ուոլֆօրթի հետ եւ պիտի մասնակցէր Մ. Նահանգներու Քոնկրէսի կարգ մը անդամներու ներկայութեամբ կրթ սեղանի մը: Պատուիրակութիւնը առանձին հանդիպումներ պիտի ունենար կարգ մը քոնկրէսականներու հետ:

Շարք՝ էջ 10

ՕԹԱՆ ՄԱՐԶՈՒՄԻ ՌԱԶՄԱՓՈՐՁԵՐ ՊԻՏԻ ԿԱՅԱՅՆԷ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԷՋ

ԹԻՖԼԻՍ, 5 (ՌՈՅԹԸՐԶ).- ՕԹԱՆի ընդհանուր հրամանատար զօր. Գուրբի Ռախթըն Հինգզաքքի օր միջօրեայ այցելութիւն մը տուած է Վրաստան՝ առ ի պատրաստութիւն նախկին խորհրդային այս համրապետութեան մէջ ՕԹԱՆեան մարզումի մեծ ռազմափորձերու կայացման:

Արեւմտամտ Վրաստան կ'ուզէ անդամակցիլ զինակցութեան, ինչ որ դժգոհութիւն կը պատճառէ Ռուսիոյ:

Ռախթըն, որ նաեւ Եւրոպայի մէջ ամերիկեան բոլոր ուժերուն հրամանատար է, հանդիպումներ ունեցած է նախագահ Էտուարտ Շեւարտաձեի եւ պաշտպանութեան նախարար Տաիա Թեւաշվի հետ: Ան Վրաստանի պատկերասփիւռի պետական կայանին յայտնած է, թէ Մ. Նահանգներ պիտի շարունակեն Վրաստանի հետ իրենց զինուորական գործակցութիւնը եւ օժանդակութիւն պիտի յատկացնեն աֆոր բանակը բարեկարգելու համար:

Ռախթընի այցելութիւնը տեղի կ'ունենար Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլըի Վրաստանի յոյսած գորակցութեան պատգամէ 2 շաբաթ ետք:

Վրաստան գաճապատ էր, թէ Ռուսիա ճնշում կը բանցնէ իր վրայ:

ՋԱԻԱԽՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ Կ'ԸՍԵ ՀԱՅԿԱԶ ԱԼՎՐՅԵԱՆ

Վերջերս Ջալախքի հայուհիները դիմագրաւած դժուարութիւնները ժողովուրդին ներկայացնելու եւ նրա թափանցիկ օժանդակութիւնը ապահովելու նպատակով Լոս Անճելեսի մէջ տեղի ունեցած են գանազան ձեռնարկներ:

30 Մարտին Լոս Անճելեսի Իրանահայ Միութեան սրահին մէջ տեղի ունեցած է առաջին ձեռնարկը, որուն ընթացքին խօսք առած են «Ջալախք» Հիմնադրամի ենթախանձնախումբի ատենապետ Հայկուշ Քոհարը, ՀՕՄԻ Շրջանային Վարչութեան ատենապետ Մարո Զարեանի, Բանասէր Հայկազ Ալվրջեանի եւ թեմի առաջնորդ Մուշեղ եպ. Մարտիրոսեանի:

Երկրորդ ձեռնարկը կայացած է 1 Ապրիլին, Կլեմէնտի Լուսիլը Հայ Սքուլի մէջ: Օրուան հանդիսավարը Մարո Մկրտիչեանն էր, թէ ՀՕՄ Սփիւռք, Հայաստանի եւ Արցախի իր մնացած օրակարգերուն վրայ աւելցուցած է Ջալախքը: Մկրտիչեան ըսած է, թէ ներկայիս օգնութեան կանչեր կը հասնին պատմական Հայաստանի մէջ մասնիկը եղող Ջալախքին: «Եկէ՛ք միասնաբար, անյապաղ, առանց գանգատի եւ դժգոհութեան ձեռք երկարենք մարդկային տարրակներ բարիքներէն պրկուած մեր հարազատ ժողովուրդին», ըսած է ան: Շեշտելով Ջալախքի օգնութեան հասնելու համազգային պարտաւարութիւնն ու պատասխանատուութիւնը Մկրտիչեանն ըստ է, թէ իւրաքանչիւրին նուիրատուութեամբ պիտի հարստանայ «Ջալախք» Հիմնադրամը, որպէսզի Ջալախքահայուհիները ամուր մնայ, ապրի ու ստեղծագործէ իր պայանական դարաւոր հողին վրայ ու ծաղկեցնէ զայն: Ան իր խօսքը եզրափակած է՝ ըսելով, թէ պատմութեան հողովոյթը պատեհութիւններ կը ստեղծէ ու կ'ընծայէ ժողովուրդներու: Եւ յետո՛ւ ան պահանջներ, որոնք պատմական պահի թելադրանքը ճիշդ գնահատելով՝ գիտակցօրէն կ'ընտրեն դժուար, սակայն զէպի յաւերթութիւն տանող ուղիներ: «Ահաւասիկ այս այդ պահն է. օգնենք այսօր, վաղը կ'ընայ ուր ըլլալը»:

Ապա խօսք առած է բանասէր Հայկազ Ալվրջեան, որ Ջալախքի այսօրուան իրավիճակը պարզած է, ըսելով, թէ կրթական - մշակութային, ընկերային, տնտեսական կառուցներուն մէջ ստեղծուած է այնպիսի իրավիճակ որ, որուն պատճառով հայերը կը հեռանան Ջալախքէն: Այս մէջը գրական հակադրեցութիւնն ունեցած է վրացիներուն համար, սակայն հայուհիներ համար՝ բացասական: Այժմ, ըսած է, Հայկազ Ալվրջեան, Հայաստանի մէջ կայ մօտ կէս միլիոն Ջալախքահայուհիներ, անկէ քիչ մը նուազ թիւով՝ Հիւսիսային Կովկասի եւ Ռուսիոյ մէջ, իսկ Ջալախքի մէջ կ'ապրին միայն 200 հազար հայեր: Հ. Ալվրջեանն ըստ է, թէ Ջալախքի հայուհիները միշտ կ'ազմած է շրջանին 95 առ հարիւրը, սակայն վրացիներուն ստեղծած նոր վարչատարածքային փոփոխութիւնն էտք հայերը թէեւ նուազած են (75 առ հարիւր), սակայն կրկին մեծամասնութիւն կ'ազմած են: Այդ պատճառով, աւելցուցած է ան, վրացիները որքիչ միջոցներու կը դիմեն Ջալախքը հայուհիներէ պարպելու համար: Անդրադառնալով Ջալախքի ռազմավարական նշանակութեան՝ Ալվրջեանն ըստ է, թէ Ջալախքը Հայաստանի համար ճակատագրական նշանակութիւն ունի, որովհետեւ անկա ճամբայ մըն է Հայաստանը Սեւ ծով հասնող, առանց որուն Հայաստան կը կտրուի արտաքին աշխարհէն:

Հայկազ Ալվրջեան կողմէն ուղղուած է ներկայներուն՝ օժանդակելու Ջալախքին, ամրապնդելու անոր տնտեսութիւնը, դպրոցները վերանորոգելու, առողջապահական պայմաններ ստեղծելու, որպէսզի Ջալախք առանձին չզգայ ինքզինքն եւ կառուած մնայ իր հողին:

Ձույզ ձեռնարկներուն ընթացքին գործադրուած են գեղարուեստական յայտագիրներ:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆԸ Վ. ՍԱՐԳՍԵԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ԿՐՈՂՆ Է Կ'ԸՍԵ ԱԼՊԷՐԹ ԲԱԶԷԿԱՆ

3 Ապրիլին տեղի ունեցած մամուլի ասուլիսի մը ընթացքին նոր ստեղծուած Հանրապետութիւն Կուսակցութեան քաղաքական խորհուրդի անդամ եւ Երեւանի նախկին քաղաքապետ Ալպէրթ Բազէեան ըստ է, որ Հայաստանի գործող իշխանութիւնները շեղած են 1999ին ժողովուրդին վստահութեան արժանացած «Միասնութիւն», դաշինքին ուղեգիծէն:

Ան ըսաւ, թէ՛ «նման իրավիճակի մէջ, գիտակցելով մեր ուսերուն դրուած քաղաքական պատասխանատուութեան, ձեռնամուկ եղանք իշխանութիւններէն տարանջատման եւ նոր կուսակցութեան մը ստեղծման»:

Ըստ Ա. Բազէեանի, նոր ստեղծուած կուսակցութիւնը Վազգէանի Սարգսեանի քաղաքական ժառանգութեան կրողն է եւ պիտի փորձէ իրականացնել այն ծրագիրները, որոնք ընդհատեցան 27 Հոկտեմբերի ոլորտ-գուլութեան պատճառով:

Յայտնենք, որ Ապրիլ - Մայիս ամիսներուն կուսակցութիւնը կը պատրաստուի Հայաստանի տարբեր մարզերուն եւ Երեւանի համայնքներուն մէջ ստեղծել տարածքային մասնաճիւղեր, իսկ աւելի ուշ կ'ազմակերպել համագումար մը, ուր պիտի հաստատուի կուսակցութեան ծրագիրը եւ պիտի ընտրուի կուսակցութեան նոր ղեկավար մարմինը:

ԼՕՍԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՔԱՐՈՉՉԱԿԱՆ - ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՅԱԶՈՂ ՁԵՌՆԱՐԿ ՄԸ

Լիբանանահայ Օգնութեան Խաչի Շրջանային Վարչութեան յարաբերական յանձնախումբի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ նախաճաշ-հանդիպում մը, 30 Մարտ 2001ին, «Ֆեմինիստ» պանդոկի շքեղ սրահներուն մէջ, նախագահութեամբ Ռէն Մարի Պապիկեան - Քիւրանի: Ներկայ եղան 300է աւելի ԼՕՍԻ-ականներ եւ հրաւիրեալներ: Հանդիպումը իրենց ներկայութեամբ պատուեցին Լիբանանի մէջ Չեխիոյ դեսպան Էւա Ֆիլիպի, Քանադայի, Ճապոնի, Հայաստանի, Աւստրալիոյ, Հոլանտայի, Եգիպտոսի, Ուրուգուայի եւ Քորէայի դեսպաններուն կիները:

Լիբանանի եւ ԼՕՍԻ քայլերգներուն ունկնդրութեան հետ բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ Նանիկ Գայթանճեան, որ հայերէն եւ ֆրանսերէն լեզուով շնորհակալութիւն յայտնեց օրուան նախագահ Ռէն Պապիկեան - Քիւրանի, դեսպանին եւ դեսպաններու կիներուն, բոլոր ներկայներուն, որոնք իրենց ներկայութեամբ քաջալերեցին հանդիպումը՝ յօգուտ ԼՕՍԻ յայնստեալ գործունէութեան ծաղկումին: Ապա յարաբե-



Աստղիկ Եղիայեան յարաբերական յանձնախումբին անունով կողմնակցութիւն ԼՕՍԻ:

րական յանձնախումբի ատենապետ Աստղիկ Եղիայեան բացման խօսքը ներկայացուց ֆրանսերէն լեզուով՝ շեշտարդնելով ԼՕՍԻ բարեսիրական եւ մարդասիրական յայնստեան գործունէութեան վրայ: Ան ըսաւ, թէ հարկ է մեր աչքերուն հետ ընդհանրապէս մեր սրտերը՝ յաւազոյն տեսնելու եւ զգալու ցան ու տառապանքը չբաւարարին, իւրաքանչիւր յանդիպումի մը կարօտեալ ուսանողներուն: Ան նշեց նաեւ ԼՕՍԻ հաստատած կայքերը միջազգային բարեսիրական կազմակերպութեանց հետ՝ անոնց ծանօթացնելով այս մեծ ընտանիքը, որ խորութիւն չի դնել իր ծառայութիւնը մատուցելու իրեն ներկայացողներուն հանդէպ:

ԼՕՍԻ տարբեր աշխատանքներուն ընդհանուր պատկերը ներկայացուց Սեդա Խաչատրեան, անգլերէն եւ հայերէն լեզուներով: Ան ծանրացաւ վերջին տարիներուն համայն աշխարհի մէջ ստեղծուած ընկերային թէ՛ բարոյական, տնտեսական թէ՛ առողջապահական վերելքի վրայ: Լիբանանի մէջ ստեղծուած տնտեսական տագնապին, մեր գաղութին դիմակալած դժուարութիւններուն՝ քիչ մը



Սեդա Խաչատրեան կը ներկայացնէ ԼՕՍԻ Շրջանային Վարչութեան խօսքը:

դին կողմէ ԼՕՍԻ բոլոր մասնաճիւղերուն ուղղուած դիմումներուն: Ան ըսաւ, թէ մասնաւորաբար անցնող տարիներուն դիմումները եղած են չափազանց շատ՝ հիւսիսային, չեքոսլովակ, կրթաթոշակի: Ան յայտնեց, թէ ԼՕՍԻ օգնած է կարելիին սահմաններուն մէջ: Բայց կարիքը այնքան մեծ է, որ միայն միասնական կամքով եւ նուիրումով կարելի պիտի ըլլայ օժանդակել բոլոր կարօտեալներուն:

Ս. Խաչատրեան յիշեց Ճապոնի դեսպանատան ճամբով հիւանդատար կառքի մը նուէրը՝ ԼՕՍԻ «Ա. Պուլիտզեան» ընկերարժեքական կեդրոնին, նաեւ Քանադայի դեսպանին նուիրատուութիւնը՝ Այնճարի մէջ միջոցներ չորացնելու յատուկ մեքենական սարքաւորումին համար: Ներկայները իրենց ծափերով շնորհակալութիւն յայտնեցին գոյգ նուիրատու դեսպաններուն:

Նախաճաշ - հանդիպումը ունեցաւ գեղարուեստական յայտագիր, մասնակցութեամբ երգչուհի Քրիսթին Ջահարի եւ դաշնակահարուհի Իգապէլ Իսահակեանի: Երգչուհին մեկնարանեց առաւելաբար ֆրանսերէն Ռեքորդ երգեր, նաեւ հայերէն ժողովրդային երգեր:

Հանդիպումին կարեւոր մասը խլեց հին ու պատմական գեղատեսիլ եւ իրա-



Նանիկ Գայթանճեանի շնորհակալութեան խօսքը՝ դեսպաններու կիներուն եւ ներկայներուն:

նանեան տարագնեցողներու շնորհակալութիւնը՝ Սամիա Սապի կողմէ: Հինգ երիտասարդուհիներ հերթաբար ցուցադրեցին իրանական հնամենի տարագներ, երաժշտութեան ընկերակցութեամբ:

Հանդիպման ընթացքին ԼՕՍԻ կատարուեցան նուիրատուութիւններ՝ նախագահուհիին եւ ներկայներուն կողմէ, որպէսզի ան իր հերթին տայ ժողովուրդին:

Իր տեսակին մէջ ինքնուրույն եւ օգտաշատ ձեռնարկ մը եղաւ այս հանդիպումը, որ յաջողեցաւ շնորհիւ նուիրեալ ԼՕՍԻ-ականներուն:

ՔԱՆԱՏԱ ՀՐԱՊԱՐԱԿԵՑ 1700ԱՄԵԱԿԻ ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹԸ

Քանատայի նամակատան «Քանատական Դրոշմաթուղթերու Մանրամասնութիւններ» պաշտօնաթերթի Ապրիլ - Յունիս թիւը, այլ դրոշմաթուղթերու շարքին, կը ներկայացնէ նաեւ Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակին նուիրուած դրոշմաթուղթը, որ հրատարակ պիտի իջնէ Մայիսին:

Դրոշմաթուղթը կը ներկայացնէ հայկական մանրանկարչութեան անուան Քրիստոսի մուտքը Երուսաղէմ, կողքին՝ հայկական խաչքար մը:

Դրոշմաթուղթը իրագործած է Թորոնթոյէն Տէպի Ատամը: Դրոշմաթուղթին դիմին է 37 քանատական սէնթ:

«Քանատական Դրոշմաթուղթերու Մանրամասնութիւններ» պաշտօնաթերթին նոյն թիւը երկու էջով ամփոփ տեղեկութիւններ կը փոխանցէ Հայաստանի, հայոց պատմութեան եւ քանատահայերուն մասին:

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԻ «ՍՈՂՈՄՈՆ ԹԵՇԼԻՐԵԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ»

Յրանսահայ բեմադրիչ Նարեկ Դուրեանի ղեկավարութեամբ «Պոհեմ» թատերախումբը Երեւանի մէջ Ապրիլին վերջը պիտի բեմադրէ Պեթր Զէյթունցեանի «Սոլոմոն Թեշլիրեանի դատավարութիւնը» ներկայացուցումը:

Ն. Դուրեանն ընկեր, որ ներկայացումը կ'ազմուած է երկու բաժինէ: Առաջին բաժինը կը կոչուի «Իրականութիւն» (այստեղ միայն վաւերագրական փաստերը կ'արձանագրուին), երկրորդը՝ «Երեւակայութիւն» (ուր նաեւ բեմադրիչին գեղարուեստական մօտեցումը կը դրսեւորուի):

Ն. Դուրեանն ընկեր նաեւ, որ ներկայացումը բեմականացման համար պահանջուող գումարը ձեռք բերուած է Սփիւռքի մէջ՝ հանգանակութեան միջոցով: «Պէտք չէ մոռնալ, որ 80 տարի առաջ Սոլոմոն Թեշլիրեան Պեթլին մէջ սպաննեց թախաբան: Ժիշդ այդ միտումով ալ նախաձեռնեցինք ներկայացումն բեմականացումը», ըսաւ բեմադրիչը:

Երեւանէն ետք այս գործը պիտի բեմադրուի նաեւ Փարիզի, Մարսէյի ու շարք մը այլ քաղաքներու յայտնի թատրոններուն մէջ:

ԱՆՅԵԱԼ ՏԱՐԻ ՕՏԱՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐՈՒ 28 ԱՌ ՀԱՐԻՒՐ ԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Անցեալ տարուան ընթացքին, նախնական տուեալներով, Հայաստանի մէջ արձանագրուած է օտար ներդրումներու 28 առ հարիւր աճ, ինչ որ կը կազմէ մօտաւորապէս 190 միլիոն տոլար:

Հայաստանի արդիւնաբերութեան եւ առեւտուրի փոխ նախարար Տիգրան Դաւիթեանի համաձայն, այս վարչացումին պատճառը Հայաստանի որդեգրած բաց դռներու եւ ազատութեան վրայ հիմնուած ներդրումային քաղաքականութիւնն է, որի գօրու է թէ՛ օտար եւ թէ՛ տեղացի ներդրողներուն համար:

Փոխ նախարար տեղեկացուցած է, որ վերջին քանի մը տարիներուն ներդրումները մօտեցած են մէկ միլիար տոլարի՝ կազմելով 700 - 800 միլիոն տոլար, որ բաւական լուրջ ցուցանիշ է Հայաստանի համար:

www.lemagan.com
ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ
20ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ
DRO P 8
ՀԱԳՈՒՍՏԻ
ԱՐԱՆՑ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ
Ձարմանք պիտի պատճառէ չեզոք, անմրցելի իր գիւնրով, եղանակի վերջին նորոյթ եւ վայելուչ հագուստներէն ձեռք դրալ:

ԳՐԱԻՈՒԱԾ
ՕՐ
9 ՅՈՒՆԻՍ 2001
ՃԱՇԿԵՐՈՅԹ
ՊԱՐԱՀԱՆԳԵՍ
Լ. Օ. ԽԱԶԻ
«ԳԱՅԻԱՆԷ»
ՄԱՍՆԱՃԻՒՂ
STUDIO
Lantern
Կը ստանձնէ ուրպէս առիթներու video
Գկարահանումներ
Հեռ. 01-266866
Էլ 03-995399



Խումբ մը ներկայներ

ամէն մարզի մէջ: ԼՕՍԻ Շրջանային Վարչութեան ատենապետը ցաւով արտայայտուեցաւ կարիքաւոր ժողովուր-

ԿՈՒԶՈՒԻ
Ոսկերչատան մը
համար, ոսկերիչ (սեւ-տէքէր) եւ ոսկի փայլեցնող գործաւորներ.
Պրիմալ հեռ. 01-242549:

ՎԱՐՉՈՒ
ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Պուրճ Համուս, Փոլիկարպոս, Գույունահիսատարութեան կից 100 քառ. մէթր տարածութիւն, յարմար նաեւ մթերանոցի: Հեռ. 01-268357:

ԿՈՒԶՈՒԻ
Սկսնակ jewellery designer մը: Հեռ. 01-262037 թիւին կէսօրուան ժամը 1:00էն 2:00:

ԵՐԿԻՍՕՍՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ

Այս յօդուածով հեղինակը կը փորձէ հայ - քրեական երկխօսութեան մօտենալ մարտավարական տեսանկիւնէ: Ան կ'առաջադրէ հայկական տեսակետներուն վրայ հաստատ մնալով հանդերձ, երկխօսութեան ձաւնով ազդել քրեական ընկերութեան մտայնութեան վրայ:

Յաճախ համացանցի միջոցով կապ կը հաստատուի տարբեր մարդոց միջեւ, զանազան նիւթերու շուրջ: Մղուած հայու հոգեբանական ձգտումէն՝ ինքնաբերաբար կ'ուզեմ ընտրել թուրք մը, նախ՝ պատասխաններ գտնելու ենթագիտակցութեանս մէջ «թուրք» քաղաքացիին շուրջ տեղադրուած հարցերուն, ետքը՝ միշտ յիշեցնելու, թէ մենք պահանջատէր ենք ու այդպիսի պիտի մնանք:

Ամէն սերունդ իր ոճն ու հայեցակարգը ունի պատմութիւնը կ'առաջադրուի, արժէքները ընկալելու, ստեղծագործելու եւ այլն: Բնականաբար հետաքրքրուածներն առարկան թուրքիոյ նոր սերունդն է՝ գուգահեռներ եւ բաղադրատարակներ զօգելու մեր գոյգ ժողովուրդներուն յառաջդիմութեան եւ աշխարհաքննարկման միջեւ: Հարցը կը կարօտի լայնածաւալ ուսումնասիրութեանց եւ, հաւանաբար, չըլլալ վերջնական եզրայայտում: Անձնական նեղ շփոխմանն էս եւ փորձերէս մէկ բան կրնամ հաստատել, թէ թուրք ժողովուրդը կը համարուի այն ազգերէն, որոնց յաջողական սերունդներուն բարոյական յառաջխաղացքը՝ արժէքներու եւ հասկացողութիւններու արդար վերաբերուածը գրեթէ չի փոխուիր, բացառելով առկա չնչին տոկոս մը: Պատճառը հաւանաբար բացատրելի այն հանգամանքով, որ որոշ նկարագրային գիծեր ունեցող ազգեր կը դատապարտեն իրենց յաջող սերունդները «անկարողութեամբ»՝ դուրս գալու համար ժառանգուած աւանդի եւ ընկալումի բաղադրութիւնէն: Բնականաբար հարցը ունի իր դրական ալ տարբերակը:

Թերեւս արդար չէ ազգերը զասակարգել իբրեւ ստեղծագործ, յառաջդիմութեան ատակ, լայնախոհ, խաղաղասէր կամ հակառակը: Սակայն կայ ակնբախ ճշմարտութիւն մը, երբ յաճախ ազգեր իրենց պատմափիլիսոփայական կառուցումներով արգելք կը հանդիսանան նոյնինքն իրենց յառաջդիմութեան եւ քաղաքակրթութեան: Ուստի ոչ մէկ արտաքին ազդակ չի կրնար տեղադրել արժէքներ, երբ բացառուած են ներքին ունակութիւնն ու ջանքեր յիշեալ ազգին մօտ:

Նկարագրային այսպիսի դրսեւորումի մը իբրեւ հետեւանք՝ թուրք նոր սերունդը կը մերժէ իր պատմութեան ամէնէն տիրահոգակալ փաստը՝ Հայկական Յեղափոխութիւնը: Ճիշդ է, որ յիշեալ պատմական ճշմարտութեան ընդունման հետեւանքները կը սարսափեցնեն ու կը մտատանջեն թուրքիան, սակայն 60 միլիոն հաշուող ժողովուրդ մը հազիւ չորսնէ հինգ մտաւորականներ կ'ունենայ, որոնք քաջութիւն կը ցուցաբերեն որմանդեմ քաղաքական կեղծիքի այդ աւանդուած ժանդոտ օղակը: Թիւ մը, որ պերճախօս փաստն է քաղաքակրթական չափանիշներու ահաւոր անհասանելիութեան:

Վերադառնալով երկխօսութեան՝ երիտասարդ թուրքերուն հետ կապ հաստատելու չէր կրեր իր մէջ մեծ ակնուկալիւիքներ: Հարց ուղղութիւն 20էն 30 տարեկան շատ մը թուրքերու: «Ի՞նչ է կարծիքդ, պէտք է՞ կառավարութիւնը ճանչնայ Հայոց Յեղափոխութիւնը»: Գրեթէ բոլորին հակազդեցութիւնը կատարող էր ու միանշանակ: Բոլորը կը հայհոյէին անվախել արտայայտութիւններով: Նոյնիսկ տիպար, գտարիւն թուրք մը ըսաւ. «Մենք առիթը կը սպասենք, որպէսզի աւելի ջարդենք, վերջնականապէս ջարդենք, այո՛, ըրած ենք ու պիտի ընենք, քանի արժանի էք ատոր»: Հագիւ կրնայի գոսպել կատարութիւնս...

Ճիշդ է, պատմական որեւէ երկխօսութիւն կը բովանդակագրկէ Հայ Դատի քաղաքական, իրաւական հասկացողութիւնը: Բոլորս համաձայն ենք, որ Յեղափոխութեան բացարձակ ճշմարտութեան շուրջ անընդունելի են ակադեմիական եւ պետական մակարդակով կասկածաշարժ քննարկումները: Սակայն ժողովրդական մակարդակի բանավէճերը՝ ի մասնաւորի նոր սերունդին հետ, անհրաժեշտ են ոչ միայն բացայայտելու ճշմարտութիւնը, այլեւ՝ մեր արդարացի ձայնն ու պահանջատիրութիւնը ուղղակիօրէն լսելի դարձնելու թուրք երիտասարդութեան: Մեզի համար չափազանց կենսական է թրքական ազգային գաղափարախօսութեան կարծրացած պատեանին մէջ ճեղք յառաջանել եւ ստուարացնել այլախոհներու (եթէ այդպէս կարելի է անուանել)՝ թուրք լայնամիտ մտածողներու շարքերը: Իւրաքանչիւր յաւելեալ միակերպ, ըլլալ ան մտաւոր:

րական թէ ժողովրդային ներկայացուցիչ, մեր դատին կրնայ ընձեռել ուժական, թէկուզ թոյլ, սակայն առկայ յենարան մը: Այս մէկը չի նշանակեր, թէ մեր գրաւը թուրք ազգի սերնդափոխութեանն էն՝ ծնած դրական եղափոխութեան վրայ գրած ենք:

Պատմականօրէն փորձած ենք այդ մէկը, որմէ միանշանակ պատգամով դուրս եկած ենք: «Թուրքը թուրք կը մնայ»: Սակայն ժամանակակից քաղաքական աւանդոյթները կը թելադրեն մարտավարական նման, եթէ ոչ առանցքային, ապա գոնէ օժանդակող ցուցադրումներ:

Հայ քաղաքական մտքի մշտառկայ հարցադրումն է. «Ի՞նչպէս վարուիլ թուրքիոյ հետ, ինչպիսի՞ մարտավարութեամբ պէտք է շահիլ ճակատամարտեր, ո՞ր կը կայանան մեր ուժի աղբիւրները, եւ ի՞նչպէս կրնանք գանձել յաւազոյնն օգտագործել»: Կան բազմաթիւ պատասխաններու տարբերակներ, քաղաքական հայեցողութիւններ, վերլուծութիւններ: Սակայն կասկած է վեր է, որ այս բոլորին հենքը կը կազմէ մէկ ճշմարտութիւն. որքան մեր առաջադրանքներն ու ոճը մեղմ ըլլան, որքան մեր արդարացի պահանջատիրութիւնը նուազագոյն դրսեւորմամբ ներկայացուած ըլլալ, այնքան մեր հակառակորդը լաւագոյնս կրնայ օգտագործել պատրմեց պահանջատիրի հարթակէն հետացնելու, ժամանակ շահելու, ապա տկարացնելու:

Բնական ուշագրաւ եւ համեմատական ճշմարտութիւն պարունակող բնութագրում մը ատենին ըրած էր թուրքիոյ արտաքին գործոց նախարար Իսմայիլ Ճէմը: «Հայերը իրենց միասնութեան ու գոյապայքարի դրդապատճառը թուրքիոյ հանդէպ ատելութեան մէջ գտած են»:

Հակնախի է, որ ատելութիւնը ժխտական եւ հիւանդագին հասկացողութիւն է: Սակայն, երբ ատելութիւնը կ'ունենայ արդար շարժառիթներ եւ ողբերգական կողմնակառուներ, բնականաբար կը դարձի այդպիսի ըլլալ: Յեղասպանութեան վերապրած առաջին սերունդը այդ արդար ու բարդ զգացական պատուարը ունեցաւ աշխարհ դիմակալելու իր նոր փորձին մէջ: Իսկ մենք երիտասարդ սերունդի ներկայացուցիչներս այսօր այդ տանջող զգացումին կը դիմարենք ժամանակակից քաղաքակիրթ չափանիշներու համապատասխանող նոր աշխարհաընկալում մը: Չանգուածաբար կը հաւատանք ազգային պահանջատիրութեան՝ իբրեւ արժանապատիւ եւ առողջ գոյութեան միակ գրաւական: Եւ ինչու՞ էջ՝ մեր հաւաքական դատապարտումը (չըսենք համար ատելութիւնը) անցեալի դահիճին լաւագոյնս դրսեւորենք քաղաքական պայծառատեսութեամբ օժտուած արդի մարտավարութեամբ:

Եւ որքան ակնբախ է, որ վերոյիշեալ միասնակամութեան արմատացող երեւոյթը կը սարսափեցնէ արտաքին գործոց նախարար եւ թուրքիան առհասարակ, որոնք ճիգ չեն խնայել խափանելու այդ միացեալ կեցածքը, յատկապէս՝ Սփիւրք - Հայերնիք երկուութիւն յառաջանելու իրենց գուհիկ նկրտումներով: Ուստի քաղաքական շատ ներկայացող նորահաս սերունդը, Սփիւրքի թէ Հայերնիքի մէջ, ժամացոյցի սլաքներու պէս ներդաշնակ գործընկերութեամբ եւ զգօն համակարգումով պարտի առաջ տանիլ սրբազան առաքելութեան բոլոր ժամանակներու աւանդը՝ «Հայ Դատը»: Մենք խաղաղասէր սերունդ ենք, այնպէս՝ ինչպէս որ եղած են մեր նախնիները: Կը փորձենք մեր հարցերը լուծել քաղաքակիրթ աշխարհի գրաւականով: Ու որքան ալ միջազգային քաղաքականութեան պայմանները տաճարաբար կրեն ի նպաստ մեզի կամ հակառակը, մէկ անդառնալի ուղի կայ մեզ համար. անընդմէջ աշխատանք: Վստահելով մեր ներուժին ու տաղանդին՝ պարտինք միջազգային ընտանիքին շահերու վերադասաւորման ելքեր որոնել ի նպաստ մեր արդար դատին: Իրական հիմքին յաճախ չեն գեղակցիր միջազգային շահերը, իսկ միջազգային շահերու դրսեւորումները որքան ալ պարտադրանք ու անարդարութիւն կրեն իրենց մէջ, հաւանաբար չնչին տոկոս մը վերապահ են իրաւական հիմքին. նոյնիսկ երբեմն կը ստեղծեն այդ տոկոսը:

Թուրք երիտասարդութեան հետ ցեղասպանութեան ճանաչման շուրջ երկխօսութիւնը, մեր ճշդած իրաւական օրինաչափութեամբ, պիտի մնայ տակաւին հեռահաս նպատակ: Սակայն մեզի համար ցեղասպանութեան ճանաչման հարցը բացարձակապէս պիտի չենթարկուի առաւելագոյն եւ նուազագոյն սահմանազերծումներու: Ան մեզի համար մէկ, ամբողջական եւ անսակարկելի խնդիր է:

ՏԻԳՐԱՆ ԳԱՐՈՅԵԱՆ

«ԱԶԳԱԿ» ԷԿՈՒԱԶՄԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
- Ա.Զ.Գ.Ա.Կ-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ՎԱՃԱՌԱՏԱՆՍ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ
40 ԱՄԵԱԿ (1961 – 2001)
Երկար տարիներու փորձառութեամբ

ԱՆՈՒՇԱՎԱՃԱՌ ՍԱՐԳԻՍ

Կը պատրաստ ամէն տեսակ համեղ

- ԱՐԵԻԵԼԵԱՆ ԱՆՈՒՇԵՂԵՆԵՐ
- ԱՄԵՆ ԱՌԱՌՕՏ ԸՆԵՑԷ ԺՊՆԷ
- ՆԱԽԱՃԱՃ՝ ԵՐՈՒԱՍԱՆ ԵՒ ԷՔԷԼԵՐ ԿԱՐԿԱԼԴԱԿ
- ԸՆԵՑԻԻ ԽՍՈՐ ԵՒ ԱՌԱՅԵՑ
- Ա. ՍԱՐԳԻՍԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ՝ ԸՆԿԱ Պուրճ Համուտ, Արաքս փողոց Հեռ.- 01-261475

ԸԱՅ ԵՒ ԹՈՒՐԵ ԿԻՆԵՐ ՓՈՒՆԸՍԲՈՒՍԱՆ ՅՈՒՇԱԳԻՐ ԿԸ ՍՈՐԱԳՐԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՔԻՈՅ ԿԻՆ ՊԱՏԳԱՄԱԿՈՐՆԵՐԸ ԿԸ ՓՈՐՁԵՆ ԿԱՊԵՐ ՀԱՍՏԱՏԵԼ ԵՐԿՈՒ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ՄԻՋԵԿԻ

Ստորեւ կու տանք վերջերս Պոլսոյ մէջ կայացած «Կինը եւ խաղաղութիւնը» թեմայով հանդիպումներուն մասնակցած Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւոր Հերմիոն Նաղդալեանի եւ «Կիներու Երկխօսութիւն» կազմակերպութեան նախագահ Հրանտի Սառաւտեանի հանդիպումներուն մասին փոխանցած տպաւորութիւնները, եւ երկու կողմերուն միջեւ ստորագրուած փոխըմբռնման յուշագիրը:

Փոխըմբռնման յուշագիրին մէջ արտայայտուած կարգ մը միտքեր ըստ ամենայնի հայտնութեան համար մերժելի եւ անընդունելի են: Ընդվզեցուցիչ է մանաւանդ արտայայտուած այն միտքը, որ՝ «այսպէս կոչուած լուծումներու փոխարէն, ուր կողմերէն մէկը պարտուող է, իսկ միւրը՝ յաղթող, կարելի են, եւ պէտք է գտնուի ճիշդ ու արդար լուծումներ» յօդուած երկու կողմերուն»:

Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ առողջ երկխօսութեան միակ ձաւնը Թուրքիոյ կողմէ Հայկական Յեղասպանութեան ճանաչումն է: Որեւէ միջանկեւ «լուծում» չի կրնար ըլլալ յօդուած երկու երկրներուն: Միւս կողմէ, հայուհիներու համար առնուազն ապաբարոյ մօտեցում է ստորագրել յայտարարութիւն մը, որ կը գործածէ «ախաբեկութիւն» եւ «զինուորական լուծում» բառերը: Որովհետեւ առաջինը կակնարկէ հայկական ցուցական արարքներուն, իսկ երկրորդը՝ Հայաստանին վրայ քրեական զինուորական ճնշումներուն:

Նախապէս հաղորդած ենք, թէ 28 Մարտին թուրք կիներու հրաւերով թուրքիա կը գտնուէր Հայաստանի կիներու պատուիրակութիւնը մը:

Հայաստան վերադարձէ ետք լրագրողներու հետ կատարուած հարցազրոյցի մը ընթացքին Հ.Նաղդալեան ըսած է, թէ թրքական հասարակութեան մէջ կարծես թէ Հայաստանի նկատմամբ թուրքիոյ վարած քաղաքականութիւնն ու վերաբերմունքը վերանայելու ցանկութիւն կրնաւուրի: Ան ըսած է, թէ այցելութեան հիմնական նպատակը երկու պետութիւններուն միջեւ քաղաքական երկխօսութեան համար հիմքեր ստեղծելն էր: «Անոնց մօտ այդ երկխօսութիւնը ստեղծելու եւ շարունակելու ցանկութիւն տեսանք»:

